

այս անունով գրուածք մը կայ, որուն ասորական թարգմանութիւնը կը գրէ թէ Ս. Կոյսը վախճանած է իր գերեզմանին մէջ, և, թէ գերեզմանը կը բաղկանար երեք այրերէ, առաջինը շատ ընդարձակ, ուրկէ կը մտնէին միջին այրի մը մէջ որ շատ փոքր սենեակ մը ունէր, և որուն արեւելեան կողմը կը գըտնուէր կաւէ նստարան մը: Նևրումն Ս. Կուսին հայերէնը սակայն չունի այդ մանրամասնութիւնները և որոշապէս կը գրէ թէ Ս. Կոյսը իր տանը մէջ վախճանեցաւ, յետոյ կը յիշէ անոր թաղման և վերափոխման պարագաները: Հնագոյն ուղեգիրները կը յայտնեն թէ այն տունը ուր Ս. Կոյսը վախճանեցաւ՝ Ս. Սիոնն է: Մոտեսդոսի և Սոփրոնիոսի օրով Ս. Կուսի ննջման աւանդութիւնը աւելի ճոխացած է եւ անով աւելի հաստատուած է Երուսաղէմի աւանդութիւնը: Նոյն թուականներուն Սիոնի մէջ ցոյց կուտային ա՛յն վէմը՝ որուն վրայ տարածուած էր Ս. Կոյսը իր օրհասի պահուն. անոր կարծր խշտեակն ալ հոն բերուած էր ուրիշ տեղէ, և է. դարուն՝ արգէն Արգուլֆ եպսիսկոպոսի զծած Սիոնի ընդարձակ եկեղեցիին յատակագիծը ցոյց կուտայ ա՛յն տեղը ուր Ս. Մարիամ վախճանած էր, և թէ նոյն եկեղեցիին իւրաքանչիւր անկիւնը նուիրագործուած էր ո՛ր և է յիշատակով: Ս. Կուսի գերեզմանի եկեղեցիին պատմութեան, նկարագրութեան և հայկական յիշատակներու մասին տեսնել Հ. Վ. Ե. (էջ 181-196):

Ս. Կուսի վերափոխակն առանդոսիւնը ըստ Յովնանեկս Դանասիացոյն (+754). — Յովհաննէս Դամասկացիին եպիսկոպոսներու եւ քահանաներու ներկայութեան Ս. Կուսի եկեղեցիին մէջ քարոզեց անոր մահ-